Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի « Չարենցավանի Ե. Չարենցի անվան թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (9 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև1),
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
-հրատարակած հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել կամ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 24-ից մինչև սեպտեմբերի 6-ը ներառյալ, ամեն օր՝ժամը 10:00-ից 16:00-ը, բացի շաբաթ և կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **սեպտեմբերի 12-ին՝ ժամը 15:00-ին,** ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի Ե. Չարենցի անվան թիվ 5 հիմնական դպրոցում. հասցեն՝ ք.Չարենցավան, Աբովյան 8:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0226) 4-23-55 կամ (093) 85-79-85 հեռախոսահամարներով: